

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևափոխությունով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2479

ՄՈՏ Ե ՀԱՐԹԱՆԱԿԵ-
ՈՒԺԵԴԱՑՆԵՆՔ
ՊԱՅՔԱՐԵ



ԶԵՀԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՑՐՈՆ, ՀՐԱՏԱՐԱԿՅ.
ԽՈՍԿՎԱ

1931

2011-07

9(47)

Ն. Ի. ԶՈՒԲՈՎ


Զ-31

ՄՊ

ՄՈՏ Ե ՀԱՂԹԱՆԱԿԸ –
ՈՒԺԵՂԱՑՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

(1931 թ. ՄԱՅԻՍԻ ԵԿԸ)

ԽՈՀԱՐ ԺՈՂՈՎ. ՊՈՒՐԴԻՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՐՈՍԿՎԱ, 1931



12291-57

2011-07

Ն. Ի. ԶՈՒԲՐՈՎ

9(47)


Զ-31

ՄՊ

ՄՈՏ Ե ՀԱՂԹԱՆԱԿԲ – ՈՒԺԵՂԱՑՆԵՆՔ ՊԱՅՔԱՐԸ

(1931 թ. ՄԱՅԻՍՄԵԿԸ)

ԽՍՀՄ ԺՈՂՈՎ. ԹԻՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
(ՌՈՍԿՎ. Ա. 1931)



12291-57

42 տարի յե անցել այն որից, յերբ հաղարավոր բանվորներ առաջին անգամ կազմակերպված, կարմիր դրոշակներով ցույցի գուրս յեկան ամբողջ յերկըագնոլի խոշորագույն քաղաքների փողոցները:

41 տարի յե անցել այն որից, յերբ Ռուսաստանի բանվորները առաջին անգամ գաղանի տոնեցին միջազգային պրոլետարական համերաշխության որը՝ 36 տարի սրանից առաջ, Պետերբուրգի բանտում նստած, Լենինը, բոյշեկական կուսակցության կազմակերպիչը, Մայիսի 1-ի առթիվ թուցիկի մեջ զբում եր՝

«Ամեն տարի Մայիսի 1-ից առաջ սասառում են համակվում մեր թշնամիները, սկսած մանր ֆարբիկանտներից և վերջացրած զորեղ թագավորներով։ Նրանք զգում են, վոր Մայիսի 1-ի ամեն տարվա տոնակատարությունը ասես բանվորական բատալյոնների զորատեսն և ու զորախաղը. դրանք այն կացնի հարվածներն են, վորը կարում ե նրանց նստած ճյուղը. դա մուրճի թխկոցն ե, վոր մեխում ե նրանց գաղաղի կափարիչը»։

Այս տարի միջազգային պրոլետարիատը տոնում ե քառասունյերեքերորդ Մայիսի 1-ը։ Այս տարի, ավելի քան յերբեցե, Մայիսի 1-ի տոնը պետք է լինի իր աղատազրման համար պայքարող պրոլետարիատի ուժերի միջազգային ստուգատեսի որ, միջազգային պրոլետարական համերաշխության որ, բոլոր յերկրների պրոլետարների — առանց ցեղի, գույնի և դավանանքի խորության — մորիլիզացիայի որ — պայքարելու իմպերիալիզմի հրեցի դեմ, նոր պատերազմի վտանգի դեմ, ԽՍՀՄ-յան — կառուցվող սոցիալիզմի յերկրի, համաշխարհային պրոլետարիատի անառիկ բերդի պաշտպանության համար։

Այս տարվա Մայիսի 1-ի ցույցերի կարմիր զբոշակները վաղվահեղափոխական մեծագույն, անեղ փոթորիկների համբավաբերն են լինելու։ Այս տարվա Մայիսի 1-ը ամենից ավելի լրիվ, ամենից ավելի ուռը կերպով կմերկացնի դասակարգային վերախմբավորութիւնները կատարածիվածի յերկրներում, ավելի լրիվ, ավելի արտահայտիչ կերպով կմերկացնի հսկայական կատասարովների այն շրջանը, վորը թևակուխել ե, վորի մեջ որեցոր ավելի ու ավելի խրվում և կապիտալիզմի ամբողջ աշխարհը — սկսած՝ իմպերիալիստներից ստրկացված կիսագաղութ Զինաստանից, վերջացրած իմպերիալիզմի հիմնային սույնությունով, նրա միջնաբերդով, «ծաղկման» յերկրով — Հյուսիս-Ամերիկական Միացյալ Նահանգներով։

ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՏԱԿ

Մայիսի 1-ի նախորեյին համաշխարհային տնտեսական ձգնաժամը վոչ միայն չի թիթեացել, այլ ընդհակառակը — նրա հարվածների տակ կործանվում են նոր ու նոր կապիտալիստական կոնցերներ և բանկեր, կրծառվում են և բոլորին փակվում խոշորագույն համաշխարհային ֆաբրիկներ, գործարաններ, պողպատագործական միավորութիւններ, փողոց շպրտելով միլիոնավոր պլոտեատարներ։ Անցքերի ընթացքը ամենազեղցիկ կերպով հաստատեց կոմունիստական ինտերնացիոնալի պրոգնոզը (նախատեսությունը), նրա առաջնորդող սեկցիայի — Համամիութենական կոմունիստական կուսակցության աված անալիզը։

«Բալեկաները, — ասում եր ընկ. Ստալինը ԽVI համառումարում, — ասում եյին, վոր տեխնիկայի աճումը կապիտալիստական յերկրներում, արտադրողական ուժերի աճումը և կարգիտական սացիոնալացումը, բանվորների և զյուղացիների միլիոնավոր մասսաների կենսական մակարդակի սահմանափակվածության պայմաններում, պետք և անխուսափելիորեն հասցնեն խստագույն անհասկան ձգնաժամի, Բուրժուական մամուլը ծիծաղում եր բոլցեկների «որիգինել մարդարեցության» վրա։ Աջ ուկունիստները մեկուսանում եյին այդ բոյլշևիկական պրոդ-

նողից, մարքսիստական անալիզը փոխարինելով լիբերալ դատարկախոսությամբ՝ «կազմակերպված կապիտալիզմի» մասին, իսկ իրականում ինչ կատարվեց, կատարվեց այն, ինչ վոր ասում եյին ըոլշեիկները։

1930 թվականի 10 ամսվա ընթացքում Ամերիկայում արտադրությունը ընկել է 18,6 տոկոսով, Անգլիայում՝ 8,4 տոկոսով, Գերմանիայում՝ 14,2 տոկոսով, Լիհաստանում՝ 26,2 տոկոսով։ Ամերիկայում, «ծաղկման» այդ գովական յերկրում, ձգնաժամի մեկ տարվա ընթացքում արտահանությունը (հկողորտ) կրծառվել է 38 տոկոսով, ներմուծումը (իմպորտը)՝ 36 տոկոսով, չուգունի արտադրությունը պակասել է 39 տոկոսով, պողպատի արտադրությունը՝ 40 տոկոսով, ավտոմոբիլների արտադրությունը՝ 60 տոկոսով, պղնձի արտադրությունը՝ 22 տոկոսով, ցինկի արտադրությունը՝ 24 տոկոսով։ Նոր շինարարությունը կրծառվել է 40 տոկոսով։ 1930 թ. ընթացքում Ամերիկայի գումարվել են վճարութիւնները ավելի քան 1000 բանկեր, յում ընդհատել են վճարութիւնները ավելի քան 1000 բանկեր, վորոնց ներդրութիւնների ընդհանուր գումարն է յերել 375 միլիոն դոլար։ 1931 թ. հունվարին Հյուս։ Ամեր. Միացյալ Նահանգներում սնանկացել են 3.316 ձեռնարկություններ՝ 1930 թ. գեկտեմբերի 2.525-ի հանդեպ։

Կանագայում 1930 թ. ներմուծումը պակասել է 22 տոկոսով, արտահանությունը՝ 25 տոկոսով, գյուղատնտեսության բերքի արժեքը՝ 33 տոկոսով։

Դաժան գործազրկությունը, իր անխուսափելի ուղեկիցներով — սովոր ու աղքատությամբ — ընդդրկել է կապիտալիստական աշխարհը։ Գործազրկության դեմ պայքարի միջազգային որը — Փետրվարի 25-ին — Պրոֆինտերնի Գործազրկացին հրապարակեց ուշադրավ մի աղյուսակ, վորը մենք, լրիվ պատկեր ստանալու համար, մեջ կրերենք ամբողջությամբ։

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՍԱԿԱՆ ԹԻՎԸ 48 ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ
1930 թ. ՓԵՏՐՎԱՐԻՆ ՅԵՎ. 1931 թ. ՀՈՒՆՎԱՐԻՆ

1930 թ. Փետր. 1931 թ. հունվ.
(Հազարներով)

Հյուս. Ամեր. Միաց. Նահանգ.	6.000	10.000
Գերմանիա	3.200	5.300
Անգլիա	2.000	3.500
Լատին. Ամերիկա	1.000	4.000
Իտալիա	1.000	1.800
Ֆրանսիա	1.000	2.000
Հիմաստան	400	1.000
Ավստրիա	500	550
Վենդիա	450	600
Չինո-Մոլոկակիա	400	740
Ռումինիա	270	400
Հարավ-Մլավիա	240	350
Բոլգարիա	200	200
Հունաստան	100	150
Իսպանիա	250	450
Պորտուգալիա	250	350
Շվեյցիա	150	300
Դանիա	150	300
Նորվեգիա	100	300
Հոլլանդիա	100	150
Բելգիա	100	150
Ֆրանսիա	100	500
Ավստրալիա	200	500
Նոր Զելանդիա	—	60
Կանադա	200	400
Մեկսիկա	500	800

Ամենամեծ հաշվով, ընտանիքներով միասին գործադրկության սարսափներին են յենթակա մոտ 100 միլիոն մարդ, չհաշված մասնակի գործադրութիւններին: Յերեսուն հինգ միլիոն բանվորներ, չհաշված գաղութների գործադրութիւն-

թիւն, չգիտեն, թէ ինչպէս կերակրեն իրենց, կանանց ու յեւ բեխաներին:

Ամենուրեք միլիոնավոր առողջ մարդիկ, փորձված ու վորակավորված աշխատողներ հնարավորություն են փնտրում ծախելու իրենց միակ ապրանքը — բանվորական ուժը, և չեն գտնում այդ հնարավորությունը: Այժմ չկա աշխարհիս մեջ վոչ մի քաղաք, ուր բանվորների մոտ 40 տոկոսը վտարված չէինի արտադրական պրոցեսների: Յեվ այդ այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-յաւնը լիովին և առմշտ վոչնչացրեց գործադրկությունը, յերբ հնդամյակի յերրորդ տարում պրոլետարական դիկտատուրայի յերկիրը ներգրավում ե արյունաբերության մեջ ավելի քան յերկու միլիոն նոր բանվորներ, յերբ մենակ բանվորուհիների պահանջը հնդամյակի յերրորդ տարում հասնում ե մոտ 1 միլիոնի:

Հարյուր միլիոնից ավելի գործադրութիւններ, այսինքն, ամբողջ մարդկության մոտ տասերորդ մասը խեղճաւմ ե սուր կարիքի ճիրաններում, գտնվում ե սովամահ լինելու սպասալիքի տակ. «Եյու-Յորկի մեկ քառակուսի կիլոմետրի վրա ավելի շատ աղքատություն կա, քան աշխարհի վորևե այլ քաղաքում» — ահա ինչ ե ներկայացնում իրենից, բուրժուական ժուռալիսաների անաշառ վկայությամբ, աշխարհիս մեջ ամենահարուստ յերկրի, վոսկու և դոլարների յերկրի մայրաքաղաքը:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը իր ամբողջ ծանրությամբ ընկավ բանվոր գասակարգի և չքավոր գյուղացիության ուսերին, խփեց ծառայող մտավորականության մանր շերտերին:

Ամերիկական կոմունիստական «Դեյլի Ուորկեր» լրագիրը ամեն որ զետեղում ե գործադրութիւնների տասնյակ նամակները, «Երջելով գործադրութիւնը տնիրը ստորագրություններ հավաքելու համար, — ասուած ե այդ նամակներից մեկի մեջ, — յես շատ ասզայ առիթ եմ ունեցել տեսնելու և համոզվելու, թէ վորպիսի սոսկալի կարիքի մեջ են ապրում գործադրութիւնները՝ Շուոյի փողոցում տեսնում եմ — գաղապանը մոտենում ե բնակարաններից մեկին, վորպեսզի կտրի գաղը՝ չվճարելու պատճառով: Նա մոնում ե խոհանոց և հարցնում

և կնոջը, թե այդ ինչ գարշահոտություն եւ՝ «Յես այսոր սպանեցի մեր պահապան շանը, վորպեսզի կերտկրեմ իմ ութը սովատանջ յերեխաներին» — պատասխանեց նա։ — Իմ ամուսինը արդեն մի քանի ամիս գործադուրկ եւ։

Նորերս նյու-Յորկի բուրժուական մամուլը զետեղեց աղբակույտերը փորփորող սոված մարդկանց լուսանկարները նրանք ազահությամբ հարձակվում են այդ կտորների վրա, վորոնցից նույնիսկ շներն են հրաժարվում։ Սովորական սառնարյունությամբ լրագրները պատժում են այն մասին, թե ինչպես գործադուրկները բաց են անում զազը իրենց տան մեջ, վորպեսզի վերջ տան իրենց կյանքին, թե ինչպես մայրը տրամվայի տակ ե գցում իր յերեխային, թե ինչպես սովատանջ մարդիկ կռվի յեն բռնվում վոստիկանության հետ լոկ այն նպատակով, վոր բանտ ընկնեն։

— Սովը մարդկանց խելագարության ե հասցնում, — գրում եր նորերս ամերիկական կոմունիստական լրագիրը։

Իլինոյսում վացսուն հազար լեռնաբանվորներից 32 հազարը բոլորովին չունեն աշխատանք, իսկ մացածները աշխատում են ամսական յերեք-չորս որ։ «Զիկագո-Տրիբուն» և հայութակային լրագրի մեջ բուրժուական ժուռնալիստներից մեկը գրում ե նյու-Յորկից՝ «Յոթը ինքնասպանություն մի որվա ընթացքում։ Տան քրեհը չվճարելու պատճառով բնակարանից դուրս շպրտված գործադուրկները ապաստան են վորոնում ստորյերկրյա յերկաթուղու ռելսերի վրա։ Գործադուրկներից մեկը գրում ե նյու-Յորկի կոմունիստական լրագրի մեջ՝ «Անցյալ որ հայտարարություն փակցին — յերկու մարդ ե պահանջվում փայտ կոտրելու համար, մեկ ժամով, 50 ցենտ։ Անսեարագրելի խառնաշփություն ստացվեց. մի քանի հազար մարդ ձգտում եյին ստանալ այդ աշխատանքը։»

«Ել բավական ե, — գրում ե մի այլ բանվոր, վոր թունավորվել ե լուսավորության գաղով, — փող չլա, աշխատանք ել չեմ կարող ճարել. մի քանի որ յես հերթի եյի կանգնած հացի համար՝ բարեհործական կայանում։ Բայց դա նշանակում ե մեռնել դանդաղ մահով։ Յես գերադասում եմ արագ մահանալ» (բանվոր Դեյլիսո-Դիչիցի մահվանից առաջ դրած նամակ)։

8

Սշեմատանքի ապարացուն վորոնումների մեջ «Ճագկման» յերկրի սոված քաղաքացիները ընկնում են հյուծված, ուղղակի փողոցներում։ «Զառամյալ ծերունի Զեմս Գոլդենը (Նյու-Յորկ շտատ) մտավ վորուր և հաց խնդրեց։ Մինչև վոր փոնատերը ուղարկեց վոստիկան հրավիրելու, ծերուկը զետին ընկալ և մեռավ։ «Ավտոմոբիլային արդյունաբերության խոշոր կենտրոնում — Դեյտրոյտում — վոմն Զոն Ռոքեն, 51 տարեկան, սովից տանջված, մտնում ե կաֆե հաց խնդրելու։ Հաճախորդներից մեկը զցում ե սեղանի վրա մի քանի ցենտ և հրամայում ե սպասավորին — կերակրել նրան։ Սակայն, այդ կողեկներն ել մնացին չծախսված — ծերունին մեռավ սրտի պայմանականից՝ ուտելիքը տեսնելիս։»

Կալիֆորնիայում մի քանի բանվորներ, սովից դրդված ձեռք են դցում վոլաորդական հրացաններ և գնում են հարեւան կոմունիտյունը — յեղջերուներ վորսալու։ Նրանք ձերբակալվում են և դատապարտվում 30 որվա բանտարկության։

— «Մենք ուրախությամբ ենք բանտ գնում, վորովհետեւ այնտեղ մեզ կերակրեն և մենք կունենանք ձրի բնակարան», — հայտարարում են «հանցագործները»։

«Սովատանջ բանվորները ներս են խուժում մթերավաճառ խանութները և գրավում են բոլոր պաշարները։ Ովնության ե կանչվում վոստիկանությունը, վորը արտասավարեր ուռմբերով վերականգնում ե խախտված կարգը։ Նյու-Յորկի միայն մեկ ուայոնում հունվարի մեկ շաբաթվա ընթացքում գատարանը քննել ե յերեք հարյուր գործ բնակարանից վտարելու մասին։ «Բալտիմոր քաղաքում, — գրում ե կոմունիստական «Դեյլի Ուորկեր» լրագրի բանիթդթակիցը, — ամեն որ լինում են գործադուրկներին բնակարանից վտարելու հարյուրավոր դեպքեր։ Վոստիկանությունը քշել ե բնակարանից յոթանասուն տարեկան մի պառավի։ Նրան պաշտպանելու յե դուրս յեկել գործադուրկ պիշչեկիների կոմիտեն, բայց նրա յերկու անդամները ձերբակալվել են այն պատրվակով, վոր միտինգում կախ աված ազգային դրոշակը սահմանված չափից վոքը ե յեղել։ «Ան-Բունիշյուն (Մոնտանա) վոստիկանությունը, առն քրեհը չվճա-

ըելու պատճառով, միողող և շնչրտել մի հղի կնոջ վեց յերեխաներով:

Այսպես են ամերիկական իրականության պատկերները:

«Միլիոնավոր գործադուրկներ, ինքնասպանություններ սովոր պատճառով, անծայր կարիք, գործազրկությունից ապահովագրման բացակայություն, բանվորական որենսության վոչ մի նվազագույն սովեր անդամ—ահա թե ինչն ե բնորոշ ամերիկական միլիարդերների յերկրի համար»: Սա դրում ե ամերիկական անկուսակցական բանվոր ջոն Տոմսոնը:

Միացյալ Նահանգներում սովամահ են լինում որական հաղար մարդ: Դա յէ անթիվ փաստերի յեղրակացման վերջաբանը:

Լինաստանում, սպիտակ տեռորի այդ տիպիկ յերկրում, չի անցնում վոչ ի որ, վորպեսզի վոստիկանությունը չարձանագրի «գործադուրկների սովոր յերթը»: Մերկ, բորիկ, սված յերեխաների յերթերը ահեղացունց տպագորություն են թողնում: «Հայրերիս աշխատանք, մեզ ու մեր մայրերին — հաց» պահանջներին վոստիկանությունը պատասխանում ե փայտերով, մրցելով այդ գործում Զևերինգի սոցիալ-վոստիկանների հետ:

Գերմանիայում տնտեսական ճգնաժամը որեցոր ավելի յեհաստափում իր անողոք իրավունքների մեջ: Հայտնի ստատիստիկ Կուչինսկին հրապարակեց շատ բնորոշ տվյալներ գերմանական բանվորի աշխատավարձի մասին 1930 թվականին և 1931 թ. հունվարին: Կուչինսկին մատնանշում ե, վոր գերմանական արդյունաբերական բանվորի շարաթական աշխատավարձը 1930 թ. պակասել է 5,25 մարկով, այսինքն, շատ ավելի, քան 10 տոկոսով: Գերմանական բանվորի ոեալ աշխատավարձը 1930 թ. պակասել է 8 տոկոսով՝ 1929 թ. համեմատությամբ և գրեթե 11 տոկոսով—1928 թ. համեմատությամբ: 1931 թ. հունվարին գերմանական բանվորի դրությունը ավելի ես վատացել է: 1931 թ. հունվարին նրա գնորդական ընդունակությունը մոտ 15 տոկոսով

ավելի ցածր ե յեղեւ, քան 1929 թ. և, միջին հաշվով, 28 տոկոսով ցածր կենսական մինիմումից:

Ամենից ցածր են վարձատրվում,—նշում ե ստատիստիկը,—տեքստիլ բանվորները, վորոնց աշխատավարձը կենսական մինիմումի 50 տոկոսով ել պակաս ե: Յերկրորդ տեղն են բռնում մետաղագործները և շինարարները, վորոնց աշխատավարձը համարյա 50 տոկոսով ցածր և կենսական մինիմումից: Փետրվարին այդ դրությունը ավելի ես սաստկացել ե»:

Կեննայում միայն 1929 թ. ինքնասպանության փորձ են արել 3.065 մարդ: Վենսայի վոստիկանական բյուրոն, հրապարակելով այդ տեղեկությունը իր բյուլետենի մեջ, շեշտում ե, վոր ինքնասպանության պատճառը գրեթե միշտ «ծանր աղքատությունը, գործազրկությունը և անապաստանությունն» են հանդիսանում:

Անգլիայի համար ամբողջ 1930 թվականը անցել է «աղքատության անընդհատ աճման» նշանի տակ: Չինաստանում գործազրուրկ կանայք հազարներով փողոց են գուրս գալիս, լրացնելով պոռնիկների բանակը: Ամենուրեք կապիտալիստական բոլոր յերկրներում աճում են աղքատությունը, ցասումը:

Հանգարծակիր յեկած տնտեսական ահեղ ճգնաժամի հանդեպ, մի քանի «գիտնականներ» դա բացատրում են անելիդուային ձևով: Այսպես, որինակ, սրանից վոչ շատ ժամանակ առաջ, գերմանական շատ լուրջ ժունալի—«Համաշխարհային տնտեսություն»-ի մեջ զետեղված եր մի հողված, վորի հեղինակը, գերմանական հայտնի դոկտոր, միանգամայն լրջորեն, առանց վորեե հումորի, ճգնաժամի յերեան գալը կապում եր արեկի մրա յերեացած ինչվոր բծերի հետ, մոլորակների տեղափոխությունների հետ...

— «Նեպտոնը հարկ յեղածին պես չի դարձել դեպի Արևմուտք»:

— Ապա ինչմեւ, — միանգամայն իրավացի կերպով հարցնում են այդ առթիվ արևմտյան բանվորները, — Նեպտոնը չի խփում Խորհրդային Միությանը:

Շահամոլ, արյունաբրու և գաղանաբարու անողոք բուրժուազիան, անընդունակ լինելով լուծել ճգնաժամը, վորը անխուսափելի յե կապիտալիզմի պայմաններում, վորձում ե

յելք գտնել, ավելի և ուժնղացնելով իր հարձակումը պլոտիստարիատի աշխատավարձի վրա, միլիոնավոր աշխատավորների կենսական մակարդակի վրա: Նա պակասեցնում է աշխատավարձը, նա կողոպտում է նիվանդանոցային կասսաները, նա կորզում է գործադուրիների խղճուկ նպաստների վերջին փշրանքները...

Ներքին-Հռենոսյան ածխային արդյունաբերության հայտնի մագնատ Զիլբերվեյնը նորերս բացահայտորեն հայտարարեց, թե գերմանական ժողովուրդը չափազանց շատ և ուսում և քիչ ե աշխատում: Նա պետք ե, ընդհակառակը, վարժվի ավելի շատ աշխատելու և պակաս ուաելու (իսկ թե ինչպես ե ուսում այդ ժողովուրդը, մենք արդեն տեսանք):

Մի այլ դեպքում պրոֆեսորներից մեկը առաջարկում է հարմարեցնել յիշրոպական բանվորի կենսական մակարդակը հնդկական բանվորի և չինական կուլյի կենսական մակարդակին: Իսկ թե ինչպես են ապրում նրանք, պատմում ե գերմանական «Ռոտե Ֆանե»-ն, հաղորդելով նորերս, վոր Զինաստանում սովորական են լինում մարդկանց ամբողջ բանակները:

Հյուս, Ամեր. Միաց. Նահանգների խոշորագույն բանկիր Անդրյու Մելոնը ցինիկորեն հայտնել ե, թե «սեփական կոտեղների, վոսկի ժամացույցների, սեփական ավտոմոբիլների դարը վերջացել և ամերիկական բանվորի համար. նա պետք ե հարմարվի Յեփրոպայի կենսական մակարդակին»: (Իսկ թե ինչպես են ապրում բանվորները Ամերիկայում, մենք նույնպես նկարագրեցինք որինակներով):

Ճգնաժամի կապիտալիստական բժշկության, գործադրության լիկվիդացիայի վերջին մեթոդներից մեկն ե — գործադրությների նկազորտը այլ յերկիրներ: Ավագ, դա կապիտալիստական ռացիոնալացման վերջին խոսքը չե: Այդ մեթոդի նախածեռնողն եր իր ժամանակին պնդաճակատների առաջնորդ, մեր հին ծանոթ — սեր Բոլլուինը: Նա յեր, վոր կամենալով յերջանկացնել անգլիական գործադրությներին, սկսեց նրանց Կանադա արտահանել, վորտեղից սովորական մարդիկ վերադառնում ելին «ամենավայրի

անսարանների և վողքերգությունների պարագաներում» («Ռուորկեր Լայֆ»):

Ավտորիայում նորերս լայնորեն տարածվում ելին ֆրանսիական ֆիրմաների կոչերը — «գնալ գաղութները»: Այստեղ, վորպես թե, զրախու և և բարեկեցություն: Միացյալ Նահանգները սկսեցին վոչ թե արտահանել, այլ արտաքսել բանվորներին: Հատուկ որինագծով բոլոր ոտարյերկրյաբանվորները պետք ե արտաքսվեն «ծաղկման» յերկրից: 1930 թվականին արտաքսվել են 16.630 բանվորներ: Մասնավորպես, մի քանի հազար մեկսիկական բանվորներ, վոչխարեների հօտի պես, յետ քշվեցին Մեկսիկա:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը այնպիսի ուժով մերկացրեց կապիտալիստական հասարակակարգի դասակարգային հակասությունները, այնպիսի ուժով խփեց պրոլետարիատին, վոր այժմ արդեն անհնարին և թագցնել տվյալները գործադրության, սոսկալի աղքատության մասին:

Վորքան ել ջանք թափեն սոցիալ-ֆաշիստական սատանաները, վորքան ել նրանք նարեն թեորիաներ և ճգնաժամի վերջանալու մասին, — բոլորի համար պարզ ե դառնում, վոր կապիտալիզմը գալարվում է ջղաձգումների մեջ: Հենց այդ պատճառով յերկրորդ և ամսությամյան ինտերնացիոնալները ցուցիւիյան իրենց բանաձեի մեջ հայտարարեցին «վճռական» պայքարի մասին գործադրությների շահերի համար, «վճռական» պայքարի մասին աշխատավորության կենսական մակարդակի վրա տեղի ունեցող հարձակման դեմ և այնու նրանք խաբում են պրոլետարներին: Խոսքը և վոչ թե գործով փորձում են սոցիալ-սրիկաները բանվոր դասակարգի «պաշտպանների» դեր խաղալ:

Իրականում Մակդոնալդի կառավարությունը, վորը իշխանության գլուխ անցավ, բանվորներին խոստանալով վոչնչացնել գործադրությունը, իր իշխանության մեկ ու կես տարվա ընթացքում աշխատանքի դրեց 93.000 գործադրությների, վոր կազմում և գործադրության նույն այդ շրջանի աճման հազիվ մեկ տասնեւորսերորդ մասը: «Բանվորական» մինչաւը Մնութենը անգլիական պրոլետարներին կոչ ե անում զոհաբերություն անել հանուն անգլիական կապի-

տալիզմի փրկությանը ճգնաժամից, Աշխատանքի երանվորական» մինխառ Մարդարիտա Բոնֆիլտը հրաժարվում է ընդունել գործադուրկների պատվիրակությունը և պատրաստվում ե վոչնչացնել գործազրկության նպաստները կանաց և յերիտասարդությանը:

Իրականում գերմանական սոցիալ-դեմոկրատները քվեյն տալիս Փաշխստական բոլոր որենքներին՝ սոցիալական ապահովագրության կրամտման մասին։ Աշխատանքի սոցիալ-դեմոկրատական մինխառ Վիսսելը առաջինը արշավանք սկսեց գործադուրկների խղճուկ նպաստների դեմ։ Հիմանդանոցային կանսաների միության սոցիալ դեմոկրատական նախագահ Լեմանը առաջինը արշավանք սկսեց հիմանդանոցային նպաստների դեմ։

Իրականում Փրանսիական սոցիալիստ Ֆիանսետը դուրս ե գալիս պարլամենտում իր Փրակցիայի անունից և առաջարկում ե գործադուրկների համար հասարակական աշխատանքներ կազմակերպել Հյուսիսային Աֆրիկայում, վրովհետև դակոնի Շանհանգիստա տարրերին յերկրից հեռացնելուն և Փրանսիական իմալերիալիզմի ուժեղացմանը գաղուներում։

Իրականում սոցիալ-դեմոկրատները և պրոֆմիութենական բյուրոկրատիան դուրս են գալիս Ավստրիայում, Հոլլանդիայում, Վենգրիայում և մի շարք այլ երկրներում բացահայտորեն հոգուտ Փաշխստական որենքների՝ ստիպողական աշխատանքների մասին գործադուրկների համար։ Կապիտալի լակեները, վորոնք ստոր առասպելներ են տարածում ստիպողական աշխատանքի մասին պլրոլիտարական դիկտատուրայի յերկրում, իրենք են հանդիսանում մասսաների ստրկացման նախաձեռնողները։ «Արտադրական նպաստների» դըռչի տակ II ինտերնացիոնալի զարդ ու պարագանք Ֆրիդրիխ Ադելերը և Ռոտո Բառերը պատրաստում են ավարիական գործադուրկների համար իսկական գաղութային ստիպողական աշխատանք և Փաշխստական ստրկություն։

Յերկրորդ և ամսատերդամյան ինտերնացիոնալները «վճռական պայքար» են հայտարարում աշխատավարձի իջեցման, բանվորների կենսական մասին մի դեմ։

Իսկ իրականում անդիմական տրեդ-յունիոնների առաջնորդները գործադուրավոր տեքստիլների, մահուղագործների և ածխահանների թիկունքում դավաճանորեն պայմանագործում են ձեռնարկողների հետ աշխատավարձի իջեցման և բանվորական որվա յերկարացման մասին։

Իրականում գերմանական սոցիալ-դեմոկրատ Զինցհեմայերը հաշտողական կամերայում քվե տվեց հոգուտ Բևելինի մետաղագործների աշխատավարձի իջեցմանը 8 տոկոսով։ Ռուրի գործադուրի ժամանակ պրոֆբյուրոկրատները քվեարկում են հոգուտ ածխահանների աշխատավարձի իջեցմանը 6 տոկոսով։

Իրականում գերմանական պրոֆմիությունների կենտրոնական որգանը, վորը անամութարար յուրացրել ե «Աշխատանք» անունը, այս տարիվ հունվարին զրում եր, թե «ոգնել գործադուրկներին կարելի յե միայն աշխատավարձի իջեցման միջոցով»։

Իրականում պրոֆբյուրոկրատները ամեն որ վիժեցնում են բանվոր դասակարգի գործադուրավային պայքարը։ Ռուրում, Բեռլինում, Բրեդֆորդում և Լանկաշիրում, Վարչակայում, Փարիզում և Տոկույում նրանք մատնում են ածխահաններին, մետաղագործներին, տեքստիլի և տրանսպորտի բանվորներին։ Խեմիցիում նրանք տրամվայի գործադուրավոր բանվորներին մատնում են տերերի ձեռքը՝ վոնտելու համար։ Խսպանիայում պրոֆմիութենական տները վոստիկանական դարանների տեղ են գործադուրավոր բանվորների դեմ։ Ամերիկական աշխատանքի ֆեներացիան պայման ե կնքում Հուվերի հետ գործադուրկներից հրաժարվելու մասին և իր կոնգրեսում բացահանագործեն դեմ ե գուրս գալիս սոցիալական ապահովագրությանը, այն պատրվակի տակ, թե պետությունից նպաստ ստանալը ամերիկական բանվորների արժանապատվությունից ցած ե (Վիլյամ Գրին)։ Յերեք չի յեղել պրոֆբյուրոկրատների այնչափ բացահայտ և ցինիկ շարեյկրեխերություն, վորպիսին և այժմ։ Կապիտալիստները այլևս կարիք չունեն հրավիրելու «դեղիններին» և պինկերուններին շտրեյկրեխերության համար։

Նրանց ծառայելու միշտ պատրաստ են և ամոռերդայցան ինտերնացիոնալները:

Ե ե ր կ ր ո ր դ և ա մ ս տ ե ր դ ա մ յ ա ն ի ն տ ե ր ն ա ց ի ո ն ա լ ն ե ր ը խ ո ս ք ե ր ո վ «վ ճ ռ ա կ ա ն պ ա յ ք ա ր » ե ն հ ա յ տ ա ր ա ր ե լ կ ա պ ի տ ա լ ի ս տ ա կ ա ն ո ա ց ի ո ն ա լ ա ց մ ա ն հ ե տ ե ա ն ք ն ե ր ի դ ե մ ։

Իրականում դեռևս չորս տարի առաջ գերմանական պրոֆմիությունների կենտրոնական վարչությունը հայտարարեց ձևունարկողներին ներկայացրած իր հուշագրի մեջ —

«Գերմանական արդյունաբերողների հուշագրին միանգամայն համաձայն, մենք ուստի ունալիքացիան համարում ենք ընդհանուր բարեկեցության կարևորագույն նախադրյալ... Ռացիոնալիզացիան անհրաժեշտ է»։

Իրականում քրանսիտական պրոֆբյուրոկրատների պարագութիւն ժեռունական ուստի առաջինը գորոյ յեկավ պաշտպանելու կապիտալիստական ուստի ունալիքացիան։

Իրականում Ամստերդամյան ինտերնացիոնալի 1930 թ. V կոնգրեսում ընդունված պաշտոնական «անտեսական» ծրագիրը ասում է՝ «Պրոֆմիությունները պետք են պատեն արդյունաբերության պլանաչափ դարձացմանը, նրա ուստի միավորմանը խոշոր արտադրական միավորների մեջ և հին մեքենաները ու աշխատանքի հին մեթոդները նորերով փոխարինելուն»։ (Պրոֆինտերնի Գործըյուրոյի դեմումից՝ բոլոր բանվորներին ու բանվորուհիներին, բոլոր գործադրուրիներին, ամբողջ բանվորական յերիտասարդությանը):

Կապիտալիզմի տնտեսական հերեային ճգնաժամը աճում է որեցոր: Այդ պատմական, լիովին անխուսափելի պրոցեսի նշանակությունը առանձնապես մեծանում է ԽՍՀՄ-յան բանվոր դասակարգի մեծադույն հաղթանակների հանդեպ, աշխարհի 1/6 մասում հաղթական գրոհ տվող սոցիալիզմի հանդեպ, կապիտալիզմի լուծը ընդմիջության գյած Խորհրդային Միության հաղթանակների հանդեպ։

ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՃԱՄԲԻՆ


Մեր Հակայական շինարարությունը գեղեցիկ կերպով վկայում ե, զոր միայն պրոլետարիատի հաղթանակը կարող ե կերպարանափոխել աշխարհը, միայն պրոլետարական հեղափոխությունը կարող ե վերջ տալ կապիտալիզմի հրեշին։

Մեր յերկիրը թեակոփել ե սոցիալիզմի շրջանը։ Հնգամյակի յերրորդ տարում մենք ավարտում ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը։ Մենք կառուցում ենք տեխնիկայի համաշխարհային հսկաներ, որեցոր ավելացնում ենք ածուխի ու յերկաթի արտադրությունը, լիովին և ընդմիշտ վերջ տվինք գործազրկությանը, ապահովեցինք աշխատանքով ամեն մի աշխատավորի։

ԽՍՀՄ-յան մեջ աշխատավորները յերկյուղ չեն կրում վաղվա համար։ Սոցիալական ապահովագրությունը ապահովում ե ամեն մի հիվանդ աշխատավորին։ Աշխատանքի և նպաստների վերաբերմամբ գոյություն չունի կնոջ անհավասարությունը — այդ զազրելի տարերությունը հապիտավորմի յերկրներում։

Բոլորիկական տեմպերի իրականացման եյությունը պարզելու համար ընկ. Մոլոտովը Խորհրդների Համամիութենական VI Համագումարում մեջ բերեց հետևյալ փաստը՝ «Անցած չորս տարիների ընթացքում՝ 1927-ից մինչև 1930 թ. ներառյալ, — մենք գործի գրինք 323 նոր ձեռնարկություններ։ Համեմատեցեք այդ թիվը, ասում եր ընկ. Մոլոտովը, նրա հետ, վոր միայն 1931 թվականին մենք պետք ե գործի զնենք 518 նոր ձեռնարկություններ... Արդյունաբերության հիմական ճյուղերում հնգամյակը իրագործվում է յերեք տարում»։

Խորհրդների Համամիութենական VI Համագումարը տվեց կուսակցության, բանվոր դասակարգի հաղթանակների հանրագումարը վոչ միայն արդյունաբերության ասպարիզում, այլ և զյուղի կերպարանափոխման, զյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում։ 1931 թ. փետրվարի 20-ին ԽՍՀՄ-յան կոլխոզների մեջ միացած եյին 8.250.000 զյուղական տնեւ ենություններ, այսինքն — Խոր-



հրդային Միության բոլոր չքավոր ու միջակ տնտեսությունների 33 տոկոսը:

1931 թ. փետրվարի 20-ին հացահատիկային այնպիսի ույզններում, ինչպես են Հյուսիսային Կովկասը, Ներքին Վոլգան, Ուկրայինայի դաշտացին մասը, Ղրիմը, Միջին Վոլգան, Կոլխոզների մեջ միացած եր բոլոր չքավոր և միջակ տնտեսությունների 67 տոկոսը: Հացահատիկային մշակույթների այն ապրանքային արտադրանքը, վորը կոլխոզները 1930 թ. ծախեցին պետությանը (460 միլիոն փութ), ավելի քան յերեք ու կես անգամ գերազանցեց կուլակների ապրանքային հացի չափը 1926/27 թ. (126 միլիոն) և ավելի քան մեկ ու կես անգամ — կալվածատիրական տնտեսության նախապատերազմական արտադրանքը (280 միլ. փութ):

Խորհրդների Համամիութենական Համագումարը ամբողջ աշխարհի առաջ ցուցադրեց սովորացյին շինարարության մեծագույն հաղթանակները: Հացի, մսի, ճակնդեղի, բամբակի, թանգարժեք մորթիների սոցիալիստական ֆաքրիկները արդեն 1930 թ. հանձնել են պետությանը ավելի քան 200 միլիոն ոռորդու ապրանքային արտադրանք: Սովորացները — պաւատնտեսական արտադրության այդ դեռևս չտեսնված տիպը — արդեն 1930 թ. տվել են յերկրին 72 միլիոն փութ հացահատիկ, ավելի քան մեկ միլիոն փութ միս, 180 միլ. փութ շաքարի ճակնդեղ, 670 հազար փութ բամբակի:

1931 թ. կինսի սովորողային շինարարության նոր մեծագույն հաջողությունների տարի: Այս տարվա վերջին, «Սկոտվողի» սովորողներում լինելու յեն մոտ 3 միլիոն գլուխ յեղջյուրավոր անասուն, 1932 թվականին — 5 միլիոն, իսկ 1933 թ. — 7 միլիոն:

«Սվ. Նովոդաշտիկ» սովորողներում այս տարվա վերջին լինելու յեն 2 միլիոն խոզ — «մսի արտադրության այդ գլխավոր մեքենան մոտակա տարիներում», — իսկ մինչև 1934 թ. — մոտ 7 միլիոն:

Մոտ 5 միլիոն վոչխար, 420 հազար գլուխ կաթնատու կով, 3 միլիոն թոչուն — սրանք են աղանդների թվերը, վո-

րոնք այս տարվա վերջին կդառնան իրականություն: Մբանք — առողջապի հերոսության թվերն են, հաղթանակող սոցիալիզմի թվերը: Այդ թվերի մեջ ե կուսակցության գըլ խավոր գիծը:

Կուսակցության գլխավոր գիծը ներկայումս ստուգվում է յուրաքանչյուր գործարանում, վորը հաջողությամբ գրոհում ե արտֆինալիանի վրա, յուրաքանչյուր գյուղում, ուր ամրագնդվում ե կոլխոզը, յուրաքանչյուր գյուղում, ուր իր աշխատանքն ե սկսում անասնաբուծական սովորողը, յուրաքանչյուր ույոնում, ուր եւեկտրոկայան ե կառուցվում...»

Մենք ունենք մեր սպեցիֆիկ գժվարությունները, նրանք, այդ գժվարությունները, միանգամայն հակադիր են այն գժվարություններին, վորոնցով տառապում ե բուրժուագիտության: Մենք, որինակ, բանվորների պակաս ենք զգում: Միլիոն յերեք հարյուր հազար վորակավորված բանվորներ են պահանջվում հսկայակի մենակ յերրուդ տարվա համար: Մեկ միլիոնից ավելի բանվորուհիներ պետք ե ազատել բթացնող, անարտադրողական խոհանոցային աշխատանքից, պետք ե սովորեցնել ու պատրաստել տասնյակ և հարյուր հազարավոր ինժեներներ, տեխնիկներ, միխանիկներ: Վոր գործարանն ել վոր վերցնենք, մենք կտեսնենք մարդկանց ահագին պակասություն: Որինակ, Կուզնեցկի հակային յերկու դոմեն, վեց մարտեն և առաջին հերթի սժանդակիչ ցեխերը գործի գցելու համար այս տարի անհրաժեշտ են ավելի քան 10 հազար նոր բանվորներ: Մենք ստիպված ենք ուղղակի հակայական պայքար մղելու այդ կադրերի պատրաստության համար, հաճախ միանգամայն հում նյութից՝ վորակավորված, վարժված կադրեր պատրաստելու համար:

Հակառակ աջ ուղղությունիստների սուտ գուշակություններին, հակառակ արցոցկիստների հականեղափոխական դատարկախոսությանը, միջազգային մեծագույն ինտրիգների և ավանդությունների հանդեպ՝ պրոլետարական դիկտատուրայի յերկրի դեմ, — Խորհրդային Միությունը արդեն այս տարի կավարտի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը:

Այդ հաղթանակները, իհարկե, պատահական չեն: Խորհրդային հասարակաբարդի հենց բնությանը հատուկ ե աշ-

խառավորների միանգամայն այլ վերաբերմունքը դեպի աշխատանքը, քանի թե կապիտալի յերկներում:

«Այնտեղ աշխատանքի (վորը իր տեսողականությամբ հյուծում և աշխատավորին) հարկադրում և աղքատության և սովամահության յերկուղը Այստեղ աշխատանքը — պատվի գործ ե, մասսաների հերոսական մըցման գործ՝ սոցիալիզմի կառուցման մեջ, բանվոր դասակարգի — արտադրության բոլոր միջոցների տիրոջ — գործն ե» (ԽՍՀՄ-յան Կենտգործկոմի III նստաշրջանի բանաձեկից):

Ինտերվենտների չարաշունչ վոռնոցը խլանում և սոցիալիստական կառուցման հսկայական դղրդյունի մեջ:

Այդ պայմաններում միանգամայն վայրի յեն հնչում բուրժուազիայի հերցուրանքները, ստոր զրպարտությունը «խորհրդային դեմքինքի» մասին, «ստիպողական աշխատանքի» մասին ԽՍՀՄ-յան մեջ. այդ զրպարտությունները այն ծխածածկությն են, վորով քողարկված՝ բուրժուազիան և նրա սոցիալ-ֆաշիստական արբանյակները հակախորհրդային պատերազմ են պատրաստում: Սակայն, ինտերվենտների դժոխային վոռնոցը խեղդվում և սոցիալիստական մեծ կառուցման վորոտընդուտ արձագանքների մեջ:

«Դեռ յերեկ բուրժուական մամուլը ամբողջ աշխարհում, — ասում եր ընկ. Մոլոտովը Խորհրդային Համամիութենական VI Համագումարում, — սիստեմատիկորեն ստեր եր տարածում խորհրդային տնտեսության քայլայման մասին, Խորհրդային Միության արդյունաբերության և գյուղատնտեսության անանկացման մասին՝ բոլցիկների դեկավարության տակ: Այսոր նա ստիպված է նոր ստեր տարածել՝ արդեն հակադիր տեսակետից: Այսոր գրեթե բոլոր ողղությունների բուրժուական մամուլը ճգնում և աղացուցել իր շփոթված ընթերցողներին, վոր Խորհրդային Միությունը այնչափ արագ և բարձրացնում իր տնտեսությունը, վոր Խորհրդային եժան ապրանքների ներմուծումը կապիտալիստական յերկրներ՝ սպառնալիք և ստեղծում այդ յերկրների համար»:

Պատահականություններ, վոր ինտերվենցիայի նախապատրաստությունը՝ ընդում «Խորհրդային դեմքինքի» և մանավանդ՝ «ընդդեմ ստիպողական աշխատանքի» պատրվակի տակ՝

առանձնապես լայն ծավալ և ստացել ներկա մոմենտին: Եյդ միջոցով բուրժուազիան ճգնում և յելք գտնել ճգնաժամից: Թրանսիսական բուրժուազիան «Յևլոպա» հեղինակավոր ժուռնալը շատ լավ և արտահայտել իմպերիալիստների պլանները՝ «Միթե պատերազմը, — զրում են նա, — ուզ չեղ կամ, համենայն դեպս, միջոց չեղ գործազուրկներին զբաղմունք տալու»...

Շահագործողները, ուժասպառ անող ռացիոնալիզացիայի ասպետները, ճորտատերերը հանդես են գալիս կառուցվող սոցիալիզմի յերկրում «ազատ» աշխատանքը պաշտպանողի դերում, Կարելի յե պատկերացնել ավելի քստմնելի տեսարան:

«Ամեն անգամ, — ասել ե ընկեր Ստալինը XVI համագումարում, — յերբ կապիտալիստական հակասություններն ոկտում են լարվել, բուրժուազիան իր հայացքներն ուղղում ե ԽՍՀ Միության կողմը. չեղ կարելի, արդյոք, կապիտալիզմի այս կամ այն հակասությունը կամ բոլոր հակասությունները միանդի, լրջել ի հաշիվ ԽՍՀ Միության, խորհրդների այդ յերկրի, հեղափոխության միջնաբերդի, վորը միայն իր իսկ գոյությամբ հեղափոխականացնում և բանվոր գասակարգը և գաղութները, խանգարում և նոր պատերազմի ծագելուն, աշխարհը նորից վերաբաժնելուն, խանգարում և նրանց տիրանալու մեր սեփական ներքին շուկային, վորը այնքան անհրաժեշտ և կապիտալիզմին մանավանդ այժմ, տնտեսական կրիզիսի հետեւնքով»:

Խմբերի աշխալիզմի շնորհց ամենից առաջ անգլիական պնդաձականները սկսեցին գոռնալ ԽՍՀ Միության մեջ գոյություն ունեցող «բոնի աշխատանքի» մասին: Անգլիական պահպանողականների յելույթները առավելապես ապշեցնում են իրենց լրբությամբ: Բրիտանական կայսրության մեջ չկա և վոչ մի անկյուն, ուր իրոք չկիմեյին ճորտական, հարկադրական աշխատանքի բրիտանական կայսրության մեջ կան տնտեսության մի շարք ճյուղեր, վրոնք մի որ իսկ չեն կարող գոյություն ունենալ յեթե մարդկանց չքչեն աշխատանքի ամեն տեսակ բռնի միջոցներով, մինչեւ իսկ մահվան պատճի սպառնալիքով: Մորկական աշխատանքը ամբողջությամբ տիրում ե բրիտանական բոլոր գաղութներում, — Հարա-

վային, Արևելյան և Արևմտյան Աֆրիկայում, Պաղեստինում, Իրակում, Կիպրոսում, Ավստրալիական կղզիների վրա, Հնդկաստանում, անգլիական թագավորի՝ Խաղաղ ովկիանոսում գտնվող հողերի վրա...

Բրիտանական Արևելյան Աֆրիկայում հարկադիր աշխատանքը սահմանված է որենքով: Հնդկաստանում բնակչությունը ամբողջ գյուղերով քշվում է աշխատելու փաստորեն ձրիարար, վորովհետև շնորհիվ դրամական տուգանքների սիստեմին, սահմանված աշխատավարձը հավասարվում է գերոյի: Հարավային Աֆրիկայում աշխատելուց հրաժարվող դեռահասներին յենթարկում են ծեծի: Յերեխաներ «ճարող» հատուկ գործակալները ստանում են մինչև յերկու փունտ ստերլինգ՝ «պարզե» գործատերերից՝ յուրաքանչյուր դեռհասի համար, վորին նրանք հանձնում են գործատիրոջ ստրկական շահագործության համար:

«Մանչեստեր Գարդիան» թերթում նորերս նկարագրությին յերեխաների շահագործության սոսկալի մանրամասնությունները լեռովե և կենիք գաղութներում: Լրագիրը պատմում է, վոր «աղջիկների խմբերը — 10-ից 16 տարեկան հասակում — շահագործվում եյին սոսկալի կերպով, ըստ վորում միմիայն աշխատանքները վերջանալուց մի քանի ամիս հետո նրանց գնարում եյին ամեն մեկին յերեք և կես պես (մոտավորապես 15 կոպեկ) որեկան»:

Նույն լրագիրը նորերս բերել եր մի գեպք, յերբ գործատերերի հրաժանով ծեծում եյին մարակով նրանց, վորոնք հրաժարվում եյին անտառը մաքրելու աշխատանքից, իսկ բանվորներին կապում եյին իրարուց թոկով կամ շըթայով և յերբ նրանք փորձեր եյին անում փախչելու, հրաշանազարկ եյին անում նրանց:

1930 թվի մայիսին անգլիական լրագրները, անշուշտ, չմտածելով, վոր հետապայում դրանով բավականաշափ պիտի խայտառակվեն, գրեցին.

«Ուխտագնացության (հաջի) սեղոնի մոտենալու պատճառով նկատվում է ճորտա՝ աճառման նշանավոր ուժեղացում: Ճորտի միջին արժեքը տատանվում է 80—100 փունտ ստերլինգի (800—1000 ռուբլի) սահմաններում: Հեշաղում

ճորտավաճառությունը պաշտոնապես թույլատրված է: Առօրտերի մեծամասնությունը տանում են Արարիա՝ Միջին և Արևելյան Աֆրիկայից, իբրև-Սայիդ թագավորի պահակախումբը բաղկացած ճորտերից»:

1926 թվին Բոլղուինի կառավարությունը հաստատել է տեղական իշխանությունների գեկրետը բնիկ յերտառարդության ստրկական աշխատանքի մասին, վարով իրավունք և տրվում ֆիզիքական պատժի յենթարկել անհնագանդներին: Զահել տղաները և աղջիկները այդ գեկրետի համաձայն պարտավոր են աշխատել գաղտերում և հանքերում, իսկ աշխատանքից հրաժարվելու դեպքում պատժվում են մտրակով: Այդ մասին հաղորդում են «Դեյլի Հերալդ» լրագիրը...

«Հազիվ թե մեկը կարողանա պատկերացնել, ասկած է Ազգերի լիգայի անունով ստացված զեկուցումներից մեկի մեջ, — այն անհավատալի տանջանքները, վորոնց յենթարկվում են ճորտերը: Դժբախտ ճորտերին իրարուց կապած՝ մտրակների և հրացանի կոթի հարվածներով քշում են ծովափը ծախելու համար: Յերբ նրանք գալիս են նշանակ՝ ած տեղը, նրանց շղթաներով կապում են իրարուց: Հաճախ նրանք զոհ են գնում ավազակների և ճորտատերերի միջև տեղի ունեցող կատաղի և արյունահեղ կոիվներին»:

Սակայն կապիտալիզմի յերկրներում տիրող «ազատ աշխատանքի» իսկական պատկերը տալիս են մեզ ստրկության կենդանի վկաները: Յերեկվա ճորտերը խոսք են պահանջում: Նրանք խոսում են ժողովներում, հեղեղում են խմբագրատները բազմաթիվ նամակներով, պահանջում են մերկացնել հակախորհրդային կամպանիայի զաղրելի եյությունը:

Ընկեր Պոպոջիկովը, վորը փախել է Բուլղարիայից, այստեղ տիրող ճորտությունից, հետեւալ բնորոշ դեպքն է պատմում: «Բանվորական ուժ վարձողները վազվզում են զյուղից-գյուղ. ծայր կարիքի մեջ գտնվող զյուղացիները կնքում են նրանց հետ ստրկացնող պայմանագրեր, տալով իրենց փոքրահասակ յերեխաներին գործարանները: Ի հարկե, վարձողները խոստանում են, վոր աղջիկներին սովորեցնելու յեն և նրանք լավ պայմանների մեջ են ապրելու: Տեղ հասնելուց հետո... նրանց տեղավորում են ցուրտ փայ-

տաշեն վրաններում։ Դրամական տուգանքների սիստեմը նրանց աշխատանքը համարյա ձրի յե դարձնում։ Ամենաչին հանցանքի համար կարցեր են նստեցնում։ Բարձր պատերը և մշտապես հակող պահապանները չեն թույլ տալիս աղջիկներին դրսի աշխարհի հետ գործ ունենալու։ Բանտարկության յենթակա բոլոր աշխատավորները, վորպես կանոն, ծանր պարտադիր աշխատանքներ են կատարում։ Նրանք բոլորովին ձրիարար աշխատում են քարահանքերում և անտառանյութեր պատրաստելով։ Բանվորական որը տեսում է առավոտյան ժամը 7-ից մինչև յերեկոյան ժամը 6-ը մի փոքրիկ ընդմիջումով։

Լատինական Ամերիկայի յերկրներում սառած միս պատրաստող գործարաններում աշխատում են յեվրոպական յերկրից բերքած բանվորները։ Ամերիկական ամենախոշոր ֆիրմաներից մեկը՝ «Յունայտեդ Ֆրուտ Կոմպանի» ստիպում և աշխատել մինչև 30 ժամ անընդհատ։ Զիլիյի բորակի (սելիտրա) հանքերում աշխատում են յերեխաները 8 տարեկան հասակից սկսած։ Հենց մոտիկ ժամանակներս հանքերում պատահած աղետի ժամանակ 40 սպանված հանքափորների դակների մեջ 13 ութամյա յերեխաների դիակներ գտնվեցին։

«Լատինական Ամերիկայի կենտրոնական յերկրներում, — պատմում եր մի միտինգում կապիտալիստական ճորտության մի ականատես, — զյուղատնտեսության մեջ աշխատում են հնդկացիները։ Նրանց շղթայում են, վորպեսզի չկարողանան փախչել։

Նավթահանքերում աշխատանքը կատարվում է ամբողջ որը վոստիկանության հակողության տակ։ Ամերիկական իմպերիալիստները նեգրերին Հայիթից բերում են Կուբա կողին, վորտեղ ստիպում են նրանց աշխատել ամբողջ որը։

«Յես ազգով լեհացի յեմ, — գրում ե Ելզասի բանթղթակիւլ «Մայիսի 1-ի» անվան խորհրդային գործարանի բանվորներին, — ինձ Ելզաս-Լոթարինդիա յեն փախցրել Պիլսուզակու Փաշիստական ռեժիմը և յերկարատե գործազրկությունը։ Այստեղ յես աշխատում եմ մետաղի գործարանում։ Յերբ յես ընդունվեցի գործարան, ամենից առաջ

սատացա յերկու գիրքը կորոնք նվիրված նյին ձեռնարկության ներքին կարգապահությանը։ Այդ գրքերի բոլոր յերեսներում շարունակ կարգում եք։ Ելլա համար տուգանք և վերցվում, ողբա պատճառով վնասում ենք, կանայք, աղջիկները և դեռահանները իրենց աշխատանքի համար ստանում են աղամարդկանց աղքատիկ վարձի մի յերրորդը։ Մեր գործարանի փայտահերերի մեջ կան նաև ամերիկացիներ։ Նրանց նախաձեռնությամբ մեր գործարանում մտցված ե ուժասպառ դարձնող աշխատանքի ռեժիմը։ Մարդիկ աշխատում են խելացնորության աստիճանն։ Շատ հաճախ ստիպված ենք լինում աշխատել որպական 16 ժամ։ Բոլորովին բնական և համարվում, յեթե ամսվա մեջ միայն յերկու աղատ որ ես ունենում։ Յեթե մեքենան կտրում է ձեռքիդ կամ վոտիդ մատը, այդ գեպքում վճարում են ոռօճիկդ 2—3 ամսվա ընթացքում։ Աշխատունակության 100 տոկոսը կորցրած հաշմանդամը ստանում է միանգամից ոժանդակություն — իր ամսական ոռօճկի 50 տոկոսը — ել ուրիշ վոչինչ։

Կապիտալիկմի յերկրների բանվորները, գաղութների և կիսագաղութների պրոլետարները, վորոնք այժմ ապրում և գործում են ԽՍՀ Միության մեջ, հաստատում են համաշխարհային ամրող պրոլետարիատի առաջ, վոր չի յեղել և չկա պրոլետարների համար ավելի աղատ և հերոսական աշխատանք, քան ԽՍՀ Միության մեջ յեղած աշխատանքն եւ Կապիտալիստական ստրկության ականատեսների ժողովները, վորոնք լայն ծավալով տեղի ունեցան ԽՍՀ Միության քաղաքներում, դարձան հեղափոխական տրիբունաներ ճորտատիրական աշխարհի դեմ, այդ ականատես վկաները խոսում եյին խստամիրտ մերկացնողների ցասկոտ լեղվով։

«Միայն ԽՍՀ Միության մեջ զոյություն ունի աղատ և ստեղծագործող աշխատանք։

«Հենվելով անձնական դիտողությունների վրա, հայտարարում ենք, վոր «ըսնի աշխատանքի» առասպելը հարկավորվել և բուրժուազիային իր անելանելի դրությունը ծածկելու համար։

